

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻ ԱՐԺԱՆԱՆԱԼՈՒ ԱՌԹԻՎ (Մայր տաճար, 5 հոկտեմբեր 1986 թ.)

ՅԱՆՈՒՆ ՀՕՐ ԵՒ ՈՐԴԻՈՅ ԵՒ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ. ԱՄԷՆ

«Մինչ տղայն էի, իբրեւ զտղայ խօսէի, իբրեւ զտղայ խորհէի, իբրեւ զտղայ համարէի, այլ յորժամ եղէ այր, զտղայութեանն ի բաց խափանեցի» (Ա Կորնթ. ԺԳ 11):

Սիրելի հավատացյալ ժողովուրդ,

Պողոս առաքյալը՝ քրիստոնեական Եկեղեցու ջերմեռանդ քարոզիչը, կորնթացիներին գրած իր առաջին նամակում խորհրդածություններ է անում մարդկային կյանքի մասին և այն աստիճանավորում է ըստ մարդկանց տարիքի և հասունության՝ ասելով. «Մինչ տղա էի, խոսում էի՝ ինչպես երեխա, մտածում էի՝ ինչպես երեխա... իսկ երբ մարդ դարձա, երեխայական բաները հեռու վանեցի»: Որքան ճշմարիտ է հնչում Պողոս առաքյալի այս խոսքը ներկա ժամանակներում ևս, երբ նա բնորոշում է տարբեր տարիքի մարդկանց հետաքրքրությունները և ըմբռնողությունը: Մեր արդի կյանքում ևս մենք մեր անձնական փորձառությամբ կարող ենք վկայել, որ մանկության, երիտասարդության և հասունության տարիներում մեր մտածելակերպը եղել է տարբեր՝ մեր կամքից գրեթե անկախ:

Այս է պատկերը արտաքին մեր կյանքի, և այս պատկերը իբրև օրինակ կամ նախատիպ պատշաճում է մարդկային կյանքին բոլոր միջավայրերում և պայմաններում: Ահա թե ինչու երիտասարդության և հասունության տարիքին մարդը ձգտում է դեպի բարին, գեղեցիկն ու կատարյալը. այս ներքին պահանջն է, որ կյանքում մեզ մղում է կատարելու սխրանքներ, լինելու բարի և ազնիվ, կարգապահ ու մարդասեր և ծառայելու մարդասիրական բարձր և վեհ գաղափարների՝ արդարության, ճշմարտության, եղբայրության և խաղաղության:

Քրիստոնյա անհատի մոտ կատարելության հասնելու տենչը մղում է նրան, որ նա հետևի և նմանվի իր Տիրոջն ու Վարդապետին՝ փնտրելով իր մեջ թաքնված աստվածային բնատուր շնորհները, որոնցով ինքը օժտված է եղել իր ծննդյան օրից՝ կյանքի կոչելու համար դրանք ու դրանցով զարդարելու իր առօրյա կյանքը: Քրիստոնյա ամեն մեկ հավատացյալ անհատի կյանքում այս գիտակցությունն է, որ մղում է նրան, որպեսզի լինի անձնալուռ, հայրենասեր, ընտանեսեր և ծառայի համամարդկային վեհ իդեալների իրականացման գործին:

Ահա այսպիսի ընթացքով է, որ երբ ես իմ տղայության տարիները բոլորեցի, ինձ գտա այնպիսի մի հոգեվիճակում, որ ինքնաբերաբար՝ ինձ մղում էր դեպի հոգևոր կյանք: Գիտակցաբար նվիրվեցի այդ կյանքի ծառայության, մի ծառայություն, որ պոհողության ճանապարհով տանում էր ինձ դեպի նվիրում հայ սրբությանց և ամբողջ հայության:

1961 թվականին ապգիս առաքինապարդ Վեհափառ Հայրապետի ձեռամբ ձեռնադրվեցի կուսակրոն քահանա՝ աբեղա: Չորս եղբայրներ էինք: Կյանքի ճանապարհին երեքը հեռացան, և ես մնացի մենակ իմ հոգևոր ուղևորության ընթացքում: 1963—65 թվականներին մեկնեցի Անգլիա բարձրագույն կրթություն ստանալու: 1965—69 թվականներին վարեցի Էջմիածնի Հոգևոր ճեմարանի տեսչի պաշտոնը: 1969 թվականի կեսերին մեկնեցի Ժնև՝ այս անգամ «Էկումենիկ Ինստիտուտ»-ում կարճ ժամանակով ուսանելու և միաժամանակ վարելու Ժնևի Ս. Հակոբ նորակառույց եկեղեցու հովվության պաշտոնը:

1972 թվականի փետրվարից նոր պաշտոնով տեղափոխվեցի Լոնդոն, իբրև հոգևոր հովիվ տեղի Ս. Սարգիս եկեղեցու: 1974 թվականի կեսերին լոնդոնահայ համայնքը ինձ վստահեց Անգլիայի հայոց հոգևոր առաջնորդի պաշտոնը, որ վարեցի իմ ընտրությունից և Ամենայն Հայոց Հայրապետի հաստատումից հետո: Այդ առթիվ ստացա եպիսկոպոսական աստիճան՝ ձեռնադրությամբ և օծմամբ, և մինչև 1982 թվականի մայիս ամիսը մնացի նույն պաշտոնի մեջ:

1982 թվականի հուլիսին ապգիս Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ վերադարձա Մայր Աթոռ՝ այս անգամ ծառայելու Նորին Սրբության անմիջական հովանավորության տակ, իբրև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ:

Այսպես տարիները սահեցին: Այս տարվա հունիսի 5-ին անդրադարձա, որ արդեն 25 տարի է, ծառայում եմ Հայ Եկեղեցուն իբրև հոգևոր սպասավոր: Հետադարձ մի հայացքով իմ հովվության և առաջնորդության տարիները հիշեցի, և սիրտս լցվեց գոհունակությամբ և խինդով, թեև, անկեղծ լինելու համար, պետք է ասեմ, որ ունեցել եմ նաև դառն ու ծանր օրեր: Հիշեցի հովվական ծառայության տարիներին իմ կատարած այցելությունները հայ ընտանիքներին ուրախ և տխուր առիթներով, այցելություններ դեպի հիվանդանոցներ, ծերանոցներ, բանտեր, դպրոցներ և ակումբներ, ապգային զանազան հանդիսությունների առթիվ տված իմ հորդորները, եկեղեցում ամեն կիրակի օր խոսած իմ քարոզները: Այս բոլորով ես փորձել եմ բախել իմ խնամքին հանձնված հոտի հոգու դռները, լցնել նրանց սրտերը մեր նախնյաց հավատով և ապագայի պայծառ տեսիլքով, հոգեպես կապել նրանց Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և հայրենի ծաղկուն մեր իրականությանը:

Ամեն անգամ, երբ կարողացել եմ դույզն չափով օգնել նրանց կամ մխիթարել՝ մխիթարվել եմ նաև ես, և երբ հնարավոր է դարձել նրանց ուրախությունն ավելացնել՝ իմ սիրտը նույնպես լցվել է անանց ուրախությամբ:

Սիրելի հավատացյալ եղբայրներ և քույրեր, հոգևոր ծառայությունը՝ տալու, նվիրվելու և սպառվելու ծառայություն է և ոչ թե ստանալու և կուտակելու: Ինչ որ Աստված մեզ պարգևել է, ծառայության ճանապարհով պետք է այն վերադարձնենք Աստծուն: Աստուծո տված պարգևը չի սպառվում, այլ բազմապատկվում է տրվելով և բաշխվելով:

Այս հիշատակելի պահին, երբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը իր սրբատառ կոնդակով նվաստիս արժանացնում է արքության բարձր պատվին, ես խոնարհաբար ի սրտե իմ երախտագիտությունն եմ հայտնում Նորին Սուրբ Օծության՝ մաղթելով, որ բարձրյալն Աստված անսասան պահի-պահպանի մեր դարավոր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, որ մեր եկեղեցական և ապգային կենտրոնական և ամենահին հաստատությունն է, ինչպես նաև ամբողջ Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին:

Շնորհաբաշխության և շնորհի ստացման այս երջանիկ պահին, իմ սրտից բխած մաղթանքն է, ուղղված առ Աստված, որ նա պարգևի բազում տարիներ Հայոց Հայրապետին, որպեսզի Նորին Սրբությունը իրեն հատուկ իմաստությամբ և ազնությամբ շարունակի առաջնորդել Հայաստանյայց Ս. Եկեղեցու նավը դեպի խաղաղ ու պայծառ ափեր:

Թող Ս. Էջմիածնի օրհնությունը ինչպես անցյալում, այսօր ևս առատապես տրվի մեր հավատացյալ ժողովրդին ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, ամեն անգամ, երբ մեր եկեղեցիների խորանների վրա սուրբ պատարագով բաշխվի Քրիստոսի կենարար մարմինն ու արյունը:

Սիրելի հավատացյալներ և հարգելի հյուրեր, մենք բոլորս այսօր, իբրև աշխարհի բոլոր ծագերից եկած հայեր, հավաքվել ենք այս դարավոր տաճարի խնկաբույր կամարների տակ: Որքան մխիթարական է և հոգեթով մտածել, որ մենք այս կամարների տակ և ընդհանրապես Հայաստանյայց Եկեղեցու ծոցում նույնանում ենք դառնալով մեկ մարմին, մեկ հոգի մեր հավատով, մեր պատմությամբ, մեր մշակույթով և մեր ձգտումներով: Աշխարհի որ անկյունում էլ գտնվելիս լինենք, ինչ քաղաքացիություն էլ ունենանք, մենք մեր արմատներով և մեր հավատով միացած ենք իբրև հավատարիմ ու կենվորյալ զավակներ մեր փառավոր Եկեղեցու: Մեր մարմինները կարող են պատկանել տարբեր երկրների՝ մեր դառն ճակատագրի բերումամբ, բայց մեր հոգիներն ու էությունը պետք է պատկանեն Քրիստոսի

հավիտենական նույն Եկեղեցուն և նրա ամենավավերական կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Մեր բոլորի ներկայությունը այս տաճարում հենց այդ է վկայում:

Միածնաէջ այս սուրբ տաճարը, ուր ինքը՝ Աստվածորդին իջավ իբրև պատասխան Ս. Գրիգոր Լուսավորչի ջերմեռանդ աղոթքների, եղել է, է և կմնա հոգևոր շտեմարանը հայ հավատացյալի՝ ջամբեղով նրան հոգևոր կենարար սնունդ: Նա տվիչն է հայ ժողովրդի գոյատևման ավյունին և կենտրոնը մեր հոգևոր տենչանքների:

Թող Ս. Էջմիածնի օրհնությունը անպակաս լինի հայ հավատացյալ ժողովրդի կյանքից: Թող Հայոց Հայրապետի կյանքը երկար լինի, որպեսզի նա շարունակի հովվել այս դարավոր, թեև տառապած, տանջված և խաչված, բայց միշտ հաղթական Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին այժմ և հավիտյան:

«Թագաւոր երկնաւոր, վեկեղեցի քո անշարժ պահեա և վերկրպագուս անուանդ քում պահեա ի խաղաղութեան». ամեն: